«Գաղափարախաղ-գաղափարաքաղ»
մշակութային ֆորումի մասնակցության
ՀԱՅՏ

Իջևանի համայնքապետարանը և «Ուրբան» կայուն զարգացման հիմնադրամը (ՈՒԿԶՀ) EU4Culture-ի «Մենք ենք մեր սարերը» ծրագրի շրջանակում հրավիրում են շահագրգիռ կազմակերպություններին բիզնեսի ներկայացուցիչներին, քաղաքացիական հասարակությանը և անհատներին մասնակցելու «Գաղափարախաղ-գաղափարաքաղ» մշակութային ֆորումին:

«Գաղափարախաղ-գաղափարաքաղ» մշակութային ֆորումի նպատակն է խթանանել Իջևան խոշորոցված համայնքի մշակութային կյանքը՝ տեղական ստեղծարար մշակութային նախաձեռնությունների միջոցով:

«Գաղափարախաղ-գաղափարաքաղ» մշակութային ֆորումի ժամանակ մասնակիցները վեր կհանեն, կքննարկեն համայնքի մշակութային խնդիրները, կխմբավորվեն համախոհների հետ կոնկրետ խնդիրների շուրջ և ստեղծարար-նորարարական լուծումներով կաշխատեն նախագծի/հայեցակարգի մշակման վրա:

Փորձագետների և ժյուրիի ներգրավում

Ծրագրի փորձագետները խմբային աշխատանքի ընթացքում հանդես կգան որպես մենթորներ: Ժյուրին կազմված կլինի ոլորտային նախարարությունների/գործակալությունների ներկայացուցիչներից, փորձագետներից, ծրագրի թիմից, տեղական ինքնակառավարման մարմիններից:

Ովքեր կարող են դիմել.

«Գաղափարախաղ-գաղափարաքաղ» մշակութային ֆորումին մասնակցելու իրավասություն ունեն

- Անհատ ձեռներեցները (ԱՁ), սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունները (ՍՊԸ), առևտրային և շահույթ հետապնդող այլ ՓՄՁ-ներ, որոնք հիմնադրվել են ՀՀ օրենսդրության համաձայն և գրանցված են և/կամ գործում են Իջևան խոշորացված համայնքում,
- ՀԿ-ներ, հիմնադրամներ, և շահույթ չհետապնդող այլ իրավաբանական անձինք, որոնք հիմնադրվել են ՀՀ օրենսդրության համաձայն և գրանցված են և/կամ գործում են Իջևան խոշորացված համայնքում
- Իջևան խոշորացված համայնքի ֆիզիկական անձ կամ ֆիզիկական անձանց նախաձեռնողական խմբեր
- Պետական/հանրային հատված (տեղական ինքնակառավարման մարմիններ, կրթական և այլ հաստատություններ) ներկայացուցիչներ:

Մասնակցության կարգը և պայմաններ

«Գաղափարախաղ-գաղափարաքաղ» մշակութային ֆորումին մասնակցությունը անվճար է: Յուրաքանչյուր մասնակից (թիմ կամ անհատ) կարող է ուղարկել միայն մեկ հայտ: Եթե թիմը ներկայացնում է խմբային աշխատանք, թիմի յուրաքանչյուր անդամ կարող է նաև առանձին անհատական հայտ ներկայացնել: Մասնակցելու համար հարկավոր է լրացնել այս առցանց հայտը՝ https://bit.ly/3LK1BrX: Այլ տարբերակներով ուղարկված աշխատանքները չեն ընդունվի: Անհրաժեշտ է լրացնել բոլոր վանդակները համապատասխան տվյալներով: Չլրացված կամ կիսատ լրացված հայտերը չեն ընդունվի:

Հայտերի ներկայացման վերջնաժամկետն է Մայիսի 10-ը ներառյալ:

Հիշեցում. Դիմորդները պետք է հստակ ցույց տան Իջևանի քաղաքապետարանի հետ համագործակցությունը և իրենց նախաձեռնությունների համաձայնեցումը Իջևանի մշակութային զարգացման ռազմավարության հետ: Ֆորումի ընտրված մասնակիցները պարտադիր պետք է մասնակցեն Կարողությունների, ունակությունների զարգացում/վերապատրաստման դասընթացների՝ օնայն և/կամ օֆլայն հարթակներում: Առնվազն 7 դասընթաց տարբեր թեմաներով կանցկացվի մինչև 60 մասնակցի համար (մասնակիցների թիվը կարող է տարբեր լինել՝ կախված կարիքից, հետաքրքրությունից և թեմայից): **Դասընթացին ամբողջությամբ մասնակցելը պարտադիր է:**

Կարողությունների զարգացման պատկերավոր թեմաները կարող են ներառել

1. Ստեղծագործական արդյունաբերություն,
2. Մշակութային և բիզնես ոլորտների հարաբերություններ,
3. Սոցիալական ձեռներեցություն,
4. Սոցիալական գործընկերություն,
5. Կորպորատիվ սոցիալական պատասխանատվություն (ԿՍՊ),
6. Հանրային մասնավոր գործընկերություն (ՊՄԳ) և այլն:
7. Ծրագրային նախագծերի կազմում և կառավարում

Դասընթացից հետո կիրականացվի «Գաղափարախաղ-գաղափարաքաղ» մշակութային ֆորումը, որտեղ ***ընտրված մասնակիցները*** տեղում դուրս կբերեն մշակութային խնդիրները հասցեագրող գաղափարներ: Այնուհետև, թիմային աշխատանքի միջոցով դրանք կվերածվեն իրագործելի ծրագրերի: Մշակվելիք ծրագրերի արդյունքում կստեղծվեն օնլայն և օֆֆլայն գործիքներ, որոնք կնպաստեն համայնքի մշակութային խնդիրների լուծմանը կամ հասցեագրմանը: Հավաքի վերջին օրը մշակված ծրագրերը կներկայացվեն ընտրող հանձնաժողովի անդամներին: Քննարկման արդյունքում ընտրված լավագույն ծրագրերը կֆինանսավորվեն, և հաղթող թիմերի մասնակցիները հնարավորություն կստանան իրենց մշակած սոցիալ-նորարարական համայնքային մշակութահեն ծրագրերն իրագործել իրենց համայնքներում: Սա նշանակում է, որ մասնակիցները պետք է հաշվի առնեն, որ ներգրավվածությունը կարող է չսահմանափակվել միջոցառման 2 օրերով:

Հաղթելու դեպքում մասնակիցները պետք է կարողանան մոտակա 4-6 ամիսների ընթացքում ժամանակ հատկացնել ծրագրի իրագործման համար:

Փոքր դրամաշնորհային մրցույթ

Փոքր դրամաշնորհների մրցույթին կարող են մասնակցել **միայն** «Գաղափարախաղ-գաղափարաքաղ» մշակութային ֆորումի մասնակիցները: Դրամաշնորհային մրցույթի հայտերը կուղարկվեն միմիայն ֆորումի մասնակիցներին:

ԼՈԹ 1. Համաիջևանյան բնակավայրերում մշակութային միջոցառումների իրականացման (տոներ, փառատոներ, ծեսեր)՝ ստեղծարար մոտեցմամբ, նոր տեխնոլոգիական լուծումներով և տնտեսական մոտիվացիաներով՝ կհայտարարվի փոքր դրամաշնորհների մրցույթ:

ԼՈԹ 2. Նյութական պատմամշակութային ժառանգության և ոչ նյութական պատմամշակութային ժառանգության պահպանման, ապահովման նպատակով կհայտարարվի փոքր դրամաշնորհների մրցույթ:

Դիմորդները պետք է հստակ ցույց տան Իջևանի քաղաքապետարանի հետ համագործակցությունը և իրենց նախաձեռնությունների համաձայնեցումը Իջևանի մշակութային զարգացման ռազմավարության հետ:

Հարցերի և լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք դիմել

- **Լիլիթ Ղալումյանին**՝ Իջևանի համայնքապետարանի կրթության, մշակույթի, սպորտի, երիտասարդության, սոցիալական աջակցության և առողջապահության բաժնի պետ, Հեռ. +374 94 464500, Էլ. հասցե ijevancds@gmail.com
- Վարուժան Ավանեսյանին՝ «Ուրբան» կայուն զարգացման հիմնադրամ, ծրագրի ավագ խորհրդական՝, հեռ՝ +374 55575150, էլ. փոստ. vavanesyan@urbanfoundation.am
- Դիանա Պետրոսյանին՝ «Ուրբան» կայուն զարգացման հիմնադրամ, դրամաշնորհհների կառավարիչ. հեռ՝ +37455271198 էլ. փոստ. dpetrosyan@urbanfoundation.am

«Մենք ենք մեր սարերը» ծրագրի աշխատակազմը սիրով սպասում է Ձեր հայտերին:
Հաջողություն ենք մաղթում

***

*«**Մենք ենք մեր սարերը**» ծրագրի կենտրոնական մոտեցումներն են՝ մշակութային ապակենտրոնացված զարգացումը և կենտրոնացումը Իջևանի բնակավայրերի վրա, ինչպես նաև ստեղծագործ և նախաձեռնողական մտածողության զարգացումը համայնքի բնակիչների շրջանում:*
***Ծրագրի նպատակն է՝** մշակութային տնտեսության զարգացման և մշակութային ժառանգության պահպանման խթանման միջոցով Իջևանի ընդլայնված համայնքում կառուցել ուժեղ և համագործակցող մշակութային դաշտ:*
Ծրագիրը իրականացվում է Իջևանի համայնքապետարանը՝ «Ուրբան» կայուն զարգացման հիմնադրամի հետ համագործակցությամբ: EU4Culture ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից աջակցելու համար մշակույթին և ստեղծագործ հատվածին՝ հատուկ ուշադրություն դարձնելով Արևելյան գործընկերության երկրների մարզային քաղաքներին և բնակավայրերին: Ծրագիրն իրականացվում է Գյոթեի ինստիտուտի (ղեկավար), Չեխական կենտրոնների, Դանիայի մշակութային ինստիտուտի և Վրաստանի ֆրանսիական ինստիտուտի կողմից: